

ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
(1906—1991)



Հուլիսի 16-ի վաղ առավոտյան, ժամը 6.30-ին, Ս. Էջմիածնում, միաբանական շենքի իր բնակարանում, 85 տարեկան հասակում, վախճանվեց գերշ. Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայաստանյայց Եկեղեցին մեծ կորուստ կրեցին:

Մեր ազգային-եկեղեցական կյանքից վաղաժամ հեռացավ հոգևոր և բարոյական առաքինություններով օժտված, բարի և ազնիվ հոգու տեր մի հոգևորական, որն իր ողջ կյանքը առանց մնացորդի նվիրաբերել էր Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր ապաստավորության նվիրական գործին:

Հանգուցյալ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը (ավազանի անունով՝ Սարգիս) ծնվել է 1906 թ. հունվարի 15-ին Վանի Կիրաշեն գյուղում, հավատավոր գյուղացու ընտանիքում:

1915 թ. Մեծ եղեռնի ավերիչ հետևանքներից զերծ չմնաց նաև պատանի Սարգսի ծննդավայրը: Նույն թվականի ապրիլի վերջին, Վանի հերոսական ինքնապաշտպանությունից հետո, Իսջանի ընտանիքն էլ (այսպես էին գյուղում կոչում Սարգսենց ընտանիքին), մյուս վանեցիների հետ գաղթեց Կովկաս: Դաժան ճանապարհին պատանի Սարգիսը կորցրեց իր հորը:

1917 թ. երբ Վանը և շրջակայքը ռուսական բանակի և հայ կամավորների կողմից վերագրավվեց, հայրենի բնակավայրերից հեռացած վանեցիները շտապեցին իրենց հայրենի օջախները՝ լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի: Սակայն շատ շուտով Վասպուրականի ժողովուրդը, նրանց թվում նաև պատանի Սարգսենց ընտանիքը, գաղթականի իր ցուպը ձեռքին հեռացավ հայրենի բնօրրանից դեպի Պարսկաստան և այնտեղից էլ՝ Իրաքի կիզիչ անապատները:

1921 թ. Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը պատանի Սարգսին, մյուս որբերի հետ միասին, հավաքեց Բաղդադի Նիր-Իսթ Ռըլիֆի որբանոցում: Որոշ ժամանակ անց, այս անմխիթար հայ զավակները տեղափոխվեցին Երուսաղեմ՝ Արարատյան որբանոց:

1923 թ. 17-ամյա Սարգիսը, որպես առաջադեմ աշակերտ, ընդունվում է Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարան և այդ օրից իր կյանքը նվիրում Հայ Եկեղեցուն ու ժողովրդին:

Ժառանգավորաց վարժարանում պատանի Սարգիսն իր ընկերների հետ երջանկություն ունեցավ աշակերտելու գերշ. Տ. Եղիշե արքեպս. Դուրյանին և Բաբկեն եպս. Կյուլեսերյանին:

1927-ին հաջողությամբ ավարտելով վարժարանի քառամյա դասընթացը, ձեռնադրվում է սարկավագ՝ ձեռամբ Տ. Եղիշե Պատրիարք Դուրյանի, և ընդունվում ընծայարան:

1930 թ. հաջողությամբ ավարտելով ընծայարանի եռամյա աստվածաբանական դասընթացը, նույն տարվա հունիսի 22-ին, ձեռամբ պատրիարքական տեղապահ Տ. Մեսրոպ արքեպս. Նշանյանի, կուսակրոն քահանա է ձեռնադրվում՝ վերանվանվելով Տ. Սիոն աբեղա: Երկու ամիս հետո, օգոստոս ամսին, Տ. Սիոն աբեղային շնորհվում է վարդապետական չորս աստիճան և գավազան կրելու իրավունք:

1930—1938 թթ. Տ. Սիոն վարդապետին Սրբոց Հակոբյանց պատմական վանքում վստահվում են կրթական, վարչական և վանական զանազան պաշտոններ, որոնք նա վարել է ամենայն նվիրվածությամբ ու պատասխանատվությամբ:

1938 թ. Տ. Սիոն վարդապետը հրավիրվում է ԱՄՆ և նշանակվում Փրովիդենսի հայոց հոգևոր հովիվ: Փրովիդենսում, իր հովվության շըր-

ջանին, Տ. Սիոն վարդապետը ձեռնհասորեն կազմակերպում է գաղութի հոգևոր, ազգային-եկեղեցական կյանքը:

1944 թ., ձեռամբ ԱՄՆ-ի հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Հովսեփյանի, Սիոն հայր սուրբը ստանում է ծայրագունության տասը աստիճանները:

1945 թ. ամռանը Տ. Սիոն ծ. վարդապետը, առաջին անգամ լինելով, այցելում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ կաթողիկոսական ընտրության և օծման առիթով: Նույն այդ ժամանակ էլ նորընտիր Գևորգ Զ Հայրապետի ձեռամբ, իր տասը վարդապետ եղբայրների հետ միասին, ձեռնադրվում է եպիսկոպոս:

1946 թ. հունիսին Տ. Սիոն սրբազանը տեղափոխվում է Դետրոյտ, որպես առաջնորդական փոխանորդ ԱՄՆ-ի հայության միջին արևմտյան շրջանի՝ հոգու անմնացորդ նվիրումով:

1953 թ. հոկտեմբերին Տ. Սիոն եպս. Մանուկյանը նշանակվում է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ:

1954 թ. նա ժամանում է Ս. Էջմիածին՝ մասնակցելու երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Հայրապետի հուղարկավորությանը:

1955 թ. Տ. Սիոն եպս. Մանուկյանը կրկին ժամանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ այս անգամ Վազգեն Ա Հայրապետի ընտրության և օծման կապակցությամբ:

Այս պատեհ առիթով էլ նա ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

1959 թ. Տ. Սիոն սրբազանն ընտրվում է ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ և տեղափոխվում Նյու Յորք: Այս պատասխանատու պաշտոնը ջանասիրությամբ ու նվիրումով նա վարում է մինչև 1966 թ.:

1966—1978 թթ. Տ. Սիոն եպիսկոպոսը Սիյուռքի զանազան գաղթօջախներում վարում է տարբեր պաշտոններ, ամենուր ձեռնհասորեն կազմակերպում հայ համայնքի ազգային-եկեղեցական և հոգևոր-կրոնական աշխատանքները:

1978 թ. Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը, ընդառաջելով Վազգեն Ա Հայրապետի հատուկ հրավերին, ընդմիշտ վերադառնում է Ս. Էջմիածին՝ ծառայելու Մայր Աթոռում որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ: Այս պաշտոնը սրբազան հայրը պատասխանատվությամբ և նվիրումով վարեց մինչև 1991 թ. փետրվար ամիսը:

Եկեղեցական-վարչական գործունեությանը զուգահեռ, Տ. Սիոն արքեպիսկոպոսը հրատարակել է 16 անուն արժեքավոր գրքեր և գրքույկներ, որոնք սերտորեն առնչվում են մեր Եկեղեցու պատմության և դավանանքի, Ս. Երուսաղեմի, մեր հայրենիքի վերածնման, հայ մշակույթի զարգացման և այլ քրիստոնեական ու բարոյախոսական նյութերին:

* * *

Սույն թվականի հուլիսի 17-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, հանգուցյալ սրբազանի մարմինը եկեղեցական թափորով տեղափոխվում է Ս. Գայանե վանք: Նույն օրը, ժամը 14-ին, Ս. Գայանե վանքում հանդիսավորությամբ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն:

Հուլիսի 18-ին, հինգշաբթի օրը, Ս. Գայանե վանքում, Հայոց Հայ-

ռապետի նախագահությամբ, խորհրդավորությամբ կատարվում է Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի վերջին օծման կարգը:

Հոգեհանգստյան հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, իսկ վերջին օծման կարգը կատարում է Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Այդ օրը Ս. Գայանե վանքը լեցուն էր ազակիր հայորդիներով: Այնտեղ էին Մայր Աթոռի ողջ միաբանությունն ու պաշտոնեությունը:

Հոգեհույզ ու սրտառուչ ս. պատարագի երգեցողությունը շարունակվեց մինչև «Հայր մեր»-ը, ապա տխրության ու վշտի այս պահին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, բարձրանալով ս. խորան, իր դամբանականն է խոսում: Սրբազան հայրը իր տխուր ու վշտալի խոսքում նախ մխիթարում է Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությանը՝ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի մահվան առիթով, ապա վեր հանում լուսահոգի սրբազանի ծառայություններն իր ազգին՝ ինչպես Սփյուռքում, այնպես էլ Մայր Հայրենիքում, որպես ազնիվ, հայրենասեր, բարի և հավատավոր հոգևոր սպասավորի:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի նախագահությամբ կատարվում է հանգուցյալ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի թաղման կարգը:

Հանգուցյալ սրբազանի մարմինը, հոգեհույզ ու սրտառուչ շարականների և հոգևոր այլ մեղեդիների երգեցողությամբ, ամփոփվում է Ս. Գայանե վանքում՝ միաբանական գերեզմանատանը:

Հուղարկավորության արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է Մայրավանքի միաբանության, պաշտոնեության, հոգևոր ճեմարանի տեսչության ցավակցությունները:

Ժամը 15-ին միաբանական սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվում է հոգեճաշ, որտեղ լուսահոգի Տ. Սիոն սրբազանի հիշատակը մեկ անգամ ևս ոգեկոչում է Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և ողջ միաբանության ու ներկաների անունից կրկին անգամ ցավակցում սրտաբեկ Հայոց Հայրապետին:

Երջանկահիշատակ սրբազան հոր մահվան տխուր առիթով, հանուն Վեհափառ Հայրապետի, ցավակցական հեռագրեր են ստացվել, խորունկ վշտով ու մխիթարության եղբայրական սիրո զգացումներով, Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսից, Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքից, Կ. Պոլսո հայոց Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքից, թեմական բոլոր առաջնորդներից, հովվություններից, ազգային և եկեղեցական հաստատություններից, քույր Եկեղեցիներից և բազում այլ անհատներից:

Խունկ և աղոթք լուսահոգի Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի անմահ հիշատակին. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: